ԳՈՐԻՍԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉԻ ՕԾՈՒՄԸ

Երբեմնի հկոր և հոգևոր ծառայությամբ բեղմնավոր Հայ Առաքելական Եկեղեցին այսօր հոգևոր նոր վերապարթոնք է ապրում, շնորհիվ որի եռանդուն գործունեություն է ծավալել թե՛ ներքին և թե՛ արտաքին թեմերում: Սպածի խոսուն հավաստումն է Սյունյաց թեմում հոկտեմբերի 27-ին առաջնորդանիստ Գորիս քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերջին քարի տեղադրումը և խաչի օծման արարողությունը:

Այս եկեղեցու կառուցման աշխատանքները սկսվել են շուրջ 100 տարի առաջ: Սակայն կոմունիստական կարգերի հաստատումից հետո աշխատանքները դադարեցվել էին, ապա այն դարձվել էր թանգարան: Մի քանի տարի առաջ եկեղեցին հանձնվեց Սյունյաց թեմին, և արդեն մեկ տարի է, ինչ սկսվել են կառուցումն ավարտին հասցնելու աշխատանքները, որոնք իրականացվում են Գորիս քաղաքի գլխավոր ճարտարապետ Սնադա Զարդարյանի նախագծի համաձայն և Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանի անմիջական հսկողությամբ: Շնորհիվ մի քանի ամիսների հետևողական աշխատանքի, հոկտեմբերի 27-ին արդեն դրվեց եկեղեցու վերջին քարը և կատարվեց խաչի օծումը:

Արարողության ներկա էին տեղական իշխանությունների ներկայացուցիչները՝ գլխավորությամբ Գորիսի քաղաքապետ Սուրեն Խաչատրյանի, որն իր գործուն օժանդակությունն էր բերել կառուցման աշխատանքներին:

Ներկա էին նաև թեմի հոգևորականները, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Պարթև քհն. Աշուրյանը, Սյունյաց թեմի թեմական խորհրդի ատենապետ Արտաշես Հարությունյանը: Մեծաթիվ հավատավոր ժողովրդի ներկայությունը հույս էր ներշնչում եկեղեցի-ժողովուրդ կապի է՛լ ավելի սերտացմանը: Գորիսեցիները, ի հավաստումն իրենց նվիրվածության և ուրախության, երկաթյա խաչը ձեռքերի վրա տեղափոխեցին եկեղեցի:

Օծումը կատարվեց ձեռամբ Սրբազան Հոր: Հավարտ օծման, թեմական առաջնորդ Սրբազանն իր ուրախության խոսքն ասաց ժողովրդին, ապա հորդորեց այսուհետ է՛լ ավելի ջերմեռանդությամբ հաճախել եկեղեցի: Այնուհետև խաչը տեղադրվեց եկեղեցու գմբեթին:

ԱՐՄԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ